

Մեղքը մեղք է

(անկախ նրանից, թե ինչ ես այն անվանում)

Մի եկեղեցու առաջնորդ վրդովված մտավ իր հովվի աշխատասենյակը և նրանից պահանջեց այլևս այդքան ուղղակիորեն չքարոզել մեղքի մասին: Նա ասաց, որ մեղքի մասին այդքան շատ լսելու դեպքում եկեղեցու երիտասարդները, թերևս, ընկնեն այն փորձելու գայթակղության մեջ: Նա շարունակեց խոսել և հովվին խորհուրդ տվեց այդ մեղքերը պարզապես անվանել «սխալներ» և այդքանով սահմանափակվել:

Իմաստուն հովիվն իսկույն գնաց և բացեց իր պահարաններից մեկը, որի մեջ մաքրող պարագաներ էր պահում, այնտեղից մի սրվակ հանեց: Վերադառնալով սրտնեղած առաջնորդի մոտ՝ նա ասաց. «Հասկանում եմ, թե ինչ ես ասում»: Ցույց տալով այն սրվակը, որի վրա մեծ տառերով գրված էր «ԹՈՒՅՆ»՝ նա շարունակեց. «Ենթադրենք, թե հանում եմ այս պիտակը և փոխարենը գրում «Հակաթթվային դեղամիջոց». մի՞ թե այդպես լավ կլինի: Չե՞ս հասկանում,- շարունակեց հովիվը,- որքան ավելի ես մեղմացնում պիտակի արտահայտած իմաստը, այնքան ավելի մահաբեր ես դարձնում թույնը»:

Մեղքը մեղք է՝ անկախ նրանից, թե ինչ ես այն անվանում կամ նրան ինչ պիտակ ես փակցնում: Աստված ասում է մեղքը: Այն ամենամահացու թույնն է: Մեղքը սպանում է հավատացյալի հոգին, եթե չի խոստովանվում ու արմատախիլ չի արվում նրա կյանքից:

Յուրաքանչյուր քարոզիչ, ուսուցիչ և եկեղեցու առաջնորդ պետք է ժողովրդին նախազգուշացնի մեղքի վտանգավոր հետևանքների մասին: Լսենք, թե Աստված ինչ պատվիրեց Եսայի մարգարեին: Աստված ասաց.

«Բարձրաձայն կանչի՛ր և մի՛ խնայիր: Չայնդ բարձրացրո՛ւ փողի նման և հայտնի՛ր իմ ժողովրդին իրենց հանցանքն ու... իրենց մեղքերը» (Եսայի 58.1):

Ինչու՞ են լռում հանձնառու շեփոհարաններից շատերը: Արդյո՞ք նախազգուշացնող պիտակները փոխարինվել են ավելի քիչ վտանգավոր թվացող պիտակներով:

Ցավոք՝ այդպես է:

Մեղքերի մեծ մասն այժմ «կենսակերպ» կամ «սխալ» է անվանվում կամ էլ համարվում է «ընդունելի, քանի դեռ այն ոչ ոքի չի վնասում»: Այդուհանդերձ՝ Աստվածաշունչը դրանք «մեղք» է անվանում և այսպես է նշագրում. «Վտանգավոր է, չդիպչե՛լ»:

«Վա՛յ նրանց, որ չարին բարի են ասում ու բարուն՝ չար, որ խավարը լույսի տեղ ու լույսը խավարի տեղ են դնում, որ դատը քաղցրի տեղ ու քաղցրը դատի տեղ են դնում» (Եսայի 5.20):

Փրկությունը ոչ թե մեղքի «պիտակները» փոխելն է, այլ մեղքից հետ դառնալը:

Եթե դու քրիստոնյա ես, բայց Քրիստոսին հաճելի կյանքով չես ապրում, եթե մեղքը իվել է քո օրհնություններն ու ուրախությունը, բայց դու անկեղծորեն ուզում ես այլևս մեղք չգործել և սրբության կյանքով ապրել, Աստծուն խոստովանի՛ր քո չխոստովանած մեղքերը և Նրանից ներո՛ւմ խնդրի՛ր: Այնուհետև Հիսուս Քրիստոսին ընդունի՛ր որպես քո Տեր և Փրկիչ:

«Ով որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի» (Հռոմեացիներին 10.13):

Արդյոք հաշտվե՞լ ես Աստծո հետ: